



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՐ ԼՐԱՏՈՒ

Ի. տարի

Թիւ 3

ԺԱՄԱՆԱԿԸ ՈՐԱԿԻ ՎԵՐԱԾԵԼ

Արմէն Իրնէշեան

Դեռ երէկ էր, երբ տնօրէն եւ պաշտօնէութիւն, ուսուցիչներ եւ ծնողներ վերամուտի եռուզեռի մէջ էինք: Վարչական, կրթական, կենցաղային դասաւորումներ եւ տնօրինումներ իրարու խաչաձեւած էին: Ինչ արագ անցաւ տարին: «Աչքդ բաց-գոց է եւ արդէն Յունիս է», կը սիրեն ըսել ուսուցիչները: Հիմա ալ տարեփակի եռուզեռ է: Եւ այսպէս տարեշրջան մըն ալ կը փակուի եւ ՀԱԳ պատմութեան կը յանձնէ իր 96-րդ տարին:

Ժամանակի դէմ մրցավազքին մէջ, անցնող օրերը իմաստ ու տարողութիւն կը ստանան արդիւնաւետ աշխատանքով, որ լաւագոյն չափանիշն է թէ՛ ժամանակի, թէ՛ նիւթական միջոցներու, թէ՛ մարդուժի սպառումին: Փանօք Ամենակալին, որ գոհունակութեամբ կը նայինք անցեալ տարուան: 2018-19-ը յատկանշուեցաւ վարժանիստերու առատութեամբ: Հոգաբարձութեան կարգադրութեամբ ունեցանք 13 հանդիպումներ՝ ուսուցիչներու, աշակերտներու եւ ծնողաց: Աշակերտներ մասնակցեցան նաեւ այլոց: Ուսուցիչներ Սայտայի մէջ մասնակցեցան Լիբանանի աւետարանական դպրոցներու համախմբումի կրթական երկօրեայ համաժողովին: Գումարենք ասոնց 155 աշխատանքային օրեր իրենց դասաւանդութիւններով, քննութիւններով, սերտողութիւններով եւ սրբագրութիւններով: Չմոռնանք անհատնում ժողովները, հերթապահութիւնները, մանաւանդ՝ արտադասարանային գործունէութիւնները: Հեքոտ տարի մըն էր, որուն համար միայն փառք կրնանք տալ Ամենակալին: Նաեւ շնորհակալութիւն մեր բոլոր գործակիցներուն, որոնց ջանադիր եւ նուիրեալ աշխատանքով անցող 9 ամիսները վերածուեցան որակի՝ հետեւելով առաքելային «Ժամանակը ծախու առէք» յորդորին:

Կը հանդիպինք գալ տարի: Յետութիւն:

ԴՈԿՏ. ԶԱԻՆ ՄՍԸՐԼԵԱՆԻ ԱՅՅԸ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱԳ-Ի ՇՐՋԱՆԱԴԱՐՏՆԵՐՈՒՆ ԵՒ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Հայ Աւետ. Գոլէճի պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մսրրլեան, ընդառաջելով ԱՄՆ-ի Արեւմտեան ափի շրջանաւարտներու եւ նախկին աշակերտներու հրաւերին, Մայիս 22 – Յունիս 5 մեկնեցաւ Լոս Անճելոս, ներկայ գտնուելու 25 Մայիսի վերահաւաքին, Կլէնտէյլի Ֆենիսիա հայկական ճաշարանին մէջ:



Կազմակերպիչներուն կողմէ բացման խօսքը կատարեց Ժիրայր Ֆրունճեան, իսկ դպրոցին եւ օրուայ հիւրին առնչութեամբ խօսք առաւ Տարօն Տէր Խաչատուրեան, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ դոկտ. Զաւէն Մսրրլեան, որ համապարփակ ելոյթ մը ունեցաւ խօսելով դպրոցին անցեալին ու ներկային մասին, շեշտելով, որ շրջանաւարտներն ու նախկին աշակերտները իրենց ներդրումով նպաստած են ու կը նպաստեն դպրոցի գոյատեւումին ու առաքելութեան յարատեւումին: Ան աւելցուց, որ դպրոցը հպարտ է իր շրջանաւարտներով եւ նախկին աշակերտներով, որոնք կեանքի այլազան ոլորտներուն մէջ յաջողութիւն արձանագրած են: Պատուակալ տնօրէնը զանոնք Հայ Աւետ. Գոլէճի գանձերը նկատեց:

Այս առիթով եղան նուիրաբարոյութիւններ, որոնց ցանկը տրուած է «Լրարու»-ի համապարտախաւս քաճինին մէջ:

Վերահաւաքէն դրուագներ կրնաք դիտել Ֆէյսպուքի AEC STUDENTS, TEACHERS AND ALUMNI REUNIONS էջէն:

ԲԱՐԵՐԱՐ ՀՐԱՉ ՍԻՍԵՌԵԱՆ 22.500.000 Լ.Ո. ԿԸ ՆՈՒԻՐԵ ՀԱԳ-ԻՆ

Փարիզաբնակ երկարամեայ նախկին աշակերտ, դպրոցի բարերարներէն տիար Հրաչ Սիսեռեան, իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեաններու յիշատակին իր տարեկան յատկացումը՝ 22.500.000 Լ.Ո., փոխանցեց դպրոց 2018-2019 տարեշրջանին համար:

Մեր յատուկ շնորհակալութիւնները:



24 Մայիսին դպրոց այցելեցին բարերարներ Լեւոն եւ Նուպար Աֆէեանները, որոնք ՀԱԳ-ի նախկին աշակերտներ են: Անոնց կ'ընկերակցէին բարերար Ռուբէն Վարդանեան եւ Նունէ Ալեքեան: Հիւրերը ընդունուեցան հովիւին, հոգաբարձութեան արեւնապետին եւ տնօրէնին կողմէ: Անոնք շրջեցան դպրոցի շէնքէն ներս եւ ծանօթացան անոր գործունէութիւններուն:

ՏԻԿԱՄՅՑ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՊՏՈՅՏՆԵՐ



6 Ապրիլին Տիկնանց ընկերային յանձնախումբը ունեցաւ յիշարժան պտոյտ մը դէպի Լիբանանի հարաւային շրջանը: Ներկաները այցելեցին պատմական եւ կրօնական արժէք ներկայացնող վայրեր ու վայելեցին շրջանի գեղատեսիլ բնութիւնը:

15 Յունիսին տեղի ունեցաւ տիկնանց ընկ. յանձնախումբի պտոյտը դէպի Շուֆի եւ շրջակայքի տեսարժան վայրերը (Արզ էլ Պարուք, Էլ Համատէ թանգարան, Տէյր էլ Ամարի Ս. Աստուածամօր տաճար):



ԾՆՈՂԱՑ ՄԱՐՄԻՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՆԱԽԱՃԱՇ



ՀԱԳ Ծնողաց մարմինը 22 Մայիսին ունեցաւ իր անդամական նախաճաշը նուիրուած Մայրերու օրուան: Ելոյթ ունեցան աստե-նապետուհի տիկին Կարինէ Չոլագեանը, տնօրէնը, հովանաւոր կազմակերպութեան՝ Spinney's-ի ներկայացուցիչը: Օրուան բանախօսն էր հոգեբան եւ դասախօս տիկին Լիւսի Դաւիթեան-Էլմաճեան: Մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտները գեղարուեստական ելոյթներով ճոխացուցին մթնոլորտը:



Լիբանանի աւելարարական վարժարաններու համախմբումի կազմակերպած երկօրեայ (5-6 Ապրիլ 2019) վարժանիստերուն (National Educational Conference), Սայրայի մէջ, մասնակցեցան նաեւ ՀԱԳ-էն խումբ մը ուսուցիչներ եւ տնօրէնը:

Դոկտ. Երուանդ Քասունի իր հեղինակած «Այաշի բանարը», տոքթ. Աւերիս Նազգաշեան եւ մահապարտ արքայները» գիրքէն օրինակներ նուիրեց երկրորդականի բոլոր աշակերտներուն:





ՄԵՐ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐԸ

12-րդ դասարան



ԱՐԾ ԳՈՆԻԱԼԵԱՆ



ՍԱՆՏՐԱ ՊԱՍԵԹ



ՎԱՆԱ ՍԵՐԱՅՏԱՐԵԱՆ



6-րդ դասարան

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԱԼԵՍԵՅԵԱՆ
ԿՐԵՅՍ ՀԱՆԱՃԵԱՆ
ՄՀԱՍՄԱՏ ՀԱՍՄՈՒՏ
ՍԵՐԼԻ ՀԱՍՏԱՏ
ԱՐԻՆ ՊԱՍՏԱՃԵԱՆ
ՍԵՐԼԻ ՌՈԶԻ ԾԱԿԻՆԵԱՆ
ԴԱԼԱՐ ՏԱԳԵՍԵԱՆ

ՄԱՆԿԱԴԱՐՏԷԶ



ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՄԲ

25 Ապրիլ 2019-ին, ակումբը պտոյտ մը ունեցաւ դէպի Թրիփոլի, առաջնորդութեամբ ակումբի խորհրդատու դոկտ. Զաւէն Մալըլեանին: Անոնք նախ այցելեցին Թրիփոլիի խաչակրաց բերդը, ապա Մինայի նաւահանգիստէն նաւով մեկնեցան դէպի մօտակայ կղզիները: Հաւաքական ճաշէ ետք, շրջեցան մայր հրապարակին շուրջ, հուսկ՝ վերադարձան Պէյրութ:



ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Ակումբի խորհրդարարու տրիկին Անի Պիլալեանի առաջնորդութեամբ ակումբի աշակերտները հետեւեալ մշակութային ձեռնարկներուն մասնակցեցան:



Ուրբաթ, 12 Ապրիլին անոնք ներկայ գտնուեցան Համազգայինի «Արեգ» թատերախումբի «Փոքր Հարուած Մը» կատակերգութեան, բեմադրութեամբ Հրայր Գալեմքերեանի: Հարկ է յիշել, որ սոյն թատերախաղին մէջ դեր ստանձնած էին նաեւ ՀԱԳ-ի աշակերտներ Կարին Տէմիրճեանն ու Գոհար Գարակէօզեանը:

Կը գնահատենք եւ կը շնորհաւորենք մեր աշակերտները:

22 Ապրիլին անոնք այցելեցին «Պատկեր» մշակութային կեդրոն, ուր կազմակերպուած էր «... եւ կեանքը յաղթեց» միացեալ գեղանկարչական ցուցահանդէսը, Մեծ եղեռնին եւ հայութեան վերապրումին նուիրուած:



ԼՈՒՐԵՐ ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԷՃԷՆ

☞ Խումբ մը աշակերտներ (Կարին Տէմիրճեան, Գոհար Գարակէօզեան, Անթոնի Օպէյտ եւ Սերժ Գասապեան) մասնակցեցան Ուազնաթ կազմակերպութեան եւ Հայկազեան համալսարանի գործակցութեամբ կայացած «Երիտասարդ առաջնորդներ Լիբանանի համար» վարժանիստերու շարքին:



☞ Ուազնաթ կազմակերպութեան 14 վարժանիստերը եզրափակուեցան ծնողաց եւ ուսուցիչներու վերջին հանդիպումներով:

☞ 18 Մայիսին, տնօրէնը, հայերէնի ուսուցչուհիները եւ երկրորդականի 5 աշակերտներ մասնակցեցան ԼԵՄ-ի կազմակերպած «Հայ դպրոցը՝ հայկական դիմագիծի պաշտպան» խորհրդաժողովին:



☞ 10-րդ դասարանի աշակերտները, առաջնորդութեամբ տիկ. Անի Պիլալեանի, ամբողջացուցին ՀԲԸՄ-ի Հայկական համացանցային համալսարանի «Հայ երաժշտութեան պատմութիւն» դասընթացը եւ ստացան համապատասխան վկայագիրներ:



ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ...



☞ 11-րդ դասարանի աշակերտուհի Վարդուկ Ֆիլիկեան շահեցաւ Ազգ. առաջնորդարանի կազմակերպած «Մեր Զուլհաճեան» շարադրական մրցանքի երրորդ դիրքը:



☞ 7-րդ դասարանի աշակերտուհի Արմինէ Քէշիշեան արժանացաւ ՄՏԿ կաթողիկոսութեան «Խաչիկ Պապիկեան» ասմունքի մրցանքի յիշարակութեան:



☞ Անթոնի Օպէյտ (11-րդ) եւ Սէլին Համմուր (10-րդ) մասնակցեցան Phoenix շարադրութեան մրցանքին ու արժանացած բաժակի:



Ճիւղանի Սալպաշեան
(Առաջին դասարան)

Մ Լ Պ Ո Մ



Հայ աւետարանական վարժարաններու աշակերտական միացեալ ներկայացուցական խումբը կ'այցելէ Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանին մէջ գտնուող նահատակաց մատուռը եւ կը մասնակցի աշակերտական հսկումին:



Մեծ Եղեռնի սուրբ նահատակներու յիշատակի ոգեկոչման առնամարզանք դպրոցին մէջ:



Օրդ. Արփի Մանկասարեան պատմեց Մեծ պահքի եւ Ս. Յարութեան տօնին առնչուած ազգային ծէսերու եւ աւանդութիւններու մասին:



Մանկապարտէզը կը տօնէ Սբ. Զատիկը – 16 Ապրիլ 2019:



31 Մայիսին երկրորդականի աշակերտները ունեցան իրենց տարեկան դաշտագնացութիւնը – Քֆարտըպէն:



Աստուածաշունչի ակումբ
Պտոյտ՝ 17 Ապրիլ
Ժիլթայի
Սբ. Եղիա Եկեղեցի

ԼՈՒԻԵՐ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԷ

Պատրաստեց Դոկտ. Զաէն Մարրիան

➤ 24 Փետրուար 2019-ին, 1953-ի շրջանաւարտուի, վաստակաւոր ուսուցչուի օրդ. Լուսին Թապագեան Ռմէյի Ս. Յարութիւն եկեղեցիի թաղական ընտրուած է, ատենադպրուիի հանգամանքով:

➤ 21 Մարտ 2019-ին, 1963-ի շրջանաւարտուի տիկ. Անահիտ (ծն. Պաղտիկեան) Տօնիկեան, Ռմէյի Ս. Յարութիւն եկեղեցիի միջինքի հանդիպումին խօսած է հայկական տոհմիկ ճաշերու մասին, շեշտելով անոնք նոր սերունդին փոխանցելու անհրաժեշտութիւնը:

➤ 29 Մարտ 2019-ին, կազմակերպութեամբ Համագայինի Բարսեղ Կանաչեան երաժշտական դպրոցին, Լեւոն Շանթ մշակութային կեդրոնի Արմէնեան սրահին մէջ տեղի ունեցաւ Նահապետ Քուչակի նուիրում երեկոյ եւ 1998-ի շրջանաւարտ, խմբավար, երաժշտագէտ Կարօ Անեսեան «Երեք հայրէն Քուչակէն» ստեղծագործութեան զինեմենտը:

➤ 1987-ի շրջանաւարտ Սեւան Արթին, որ քսան տարիներէ ի վեր կ'ապրէր Լոստոնի մէջ եւ հասած էր դրամատան մը վարիչի պաշտօնին, երկու լիբանանահայ բարեկամներու հետ 2-3 ամիս առաջ ներգաղթած է Հայաստան, ուր գործակցաբար բացած են «Golden Bakery» փոտը, որ արաբական հաց կը պատրաստէ յատկապէս ճաշարաններու համար:

➤ 1955-ի շրջանաւարտ, ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն, պատմաբան դոկտ. Զաէն Մարրիան, Պիքֆաիայի նահատակաց յուշարձանին առջեւ կայացած ՀԲԸՄ-ի կազմակերպած յուշատօնին բանախօսն էր 24 Ապրիլ 2019-ին:



➤ 2015-ի շրջանաւարտ Արման Խտրլարեան, Պէյրոնի ամերիկեան համալսարանի Յունիս 1-ի վկայականաց բաշման հանդէսին, 1600 ուսանողներու մէջէն ընտրուած ըլլալով, կարգաց հրաժեշտի ուղերձը, 5000 հոգիի ներկայութեամբ:



➤ ՀՅԴ Սարգսրապատ կոմիտէի քարոզչական յանձնախումբին կազմակերպած մայիսեան յաղթանակներու նուիրում ժողովրդային փառատօնին (2 Յունիս 2019, Պուրճ Համնուտի Արին կեդրոն) գլխաւոր խօսողն էր երկարամեայ նախկին աշակերտ տոքթ. Էլի Թաշճեան:

➤ 1980-ի շրջանաւարտ Արա Սիւտեան՝ Պէյրոյի Ռատիօ Սեւանի տէրը, 14 Մայիս 2019-ին արժանացած է ՀՀ Սփիւքի նախարարութեան «Ուիլիերմ Սարոյեան» շքանշանին, լիբանանահայ գաղութէն ներս իր ազգային-հասարակական գործունէութեան առ ի գնահատանք:



➤ Նախկին աշակերտ Պօղոս Պօղոսեան, Յունիս 2019-ին աւարտեց Դիլիջանի United World College-ը (UWC Diligan): Կը շտրհաւորենք զինք:

ՆՇԱՆՏՈՒՐ

- 2007-ի շրջանաւարտ Վարանդ Բիրքճեան նշանուած է օրդ. Ղիւրա Իսքենարարանիի հետ, Յունուար 2019-ին, Պէյրոյ:

ՄԱՀ

† 1955-ի շրջանաւարտուի, վաստակաւոր ուսուցչուի Անահիտ Թութիկեան-Մէյմարեան (1938-2019), յետ անողորմ հիւանդութեան մահացած է Լոս Անճելոսի մէջ, 14 Ապրիլ 2019-ին:



† 1975-ի շրջանաւարտ Արա Ճամպուլեան (1957-2019) մահացաւ 31 Մարտ 2019-ին, Երեւանի մէջ, յետ անողորմ հիւանդութեան: Ան ՀԱԳ-էն ներս իր աշակերտութեան փարիներուն օգտակար հանդիսացած էր դպրոցի լսարեսողական բաժնին:



† 1951-ի շրջանաւարտ, սրտաբան տոքթ. Հենրի Հարիսեան (1935-2019) մահացաւ Մանսթըրի մէջ (Ինտիանա, ԱՄՆ) 8 Յունուար 2019-ին:



† Մեծ յապաղումով լսեցինք ՀԱԳ-ի 1976 - 1988 բնագիտութեան ուսուցիչ եւ գիտութեան բաժանմունքի աւրեւսպետ Արման Տերվիշի (1938-2017) մահը, երկու փարի առաջ երկամունքի բարորութիւններէ:



Այցեկեցեք

ՀԱՅ ԱԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԵՃի կայքէջը

<http://www.aecbeirut.edu.lb/>



ԱՒԱՆԴԱԿԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ



Մայիս 18-ին ՀԱԳ ունեցաւ իր աւանդական ցուցահանդէս-գեղարուեստական յայտագիրը, ծնողներու եւ հիւրերու ներկայութեամբ: Աշակերտները ցուցադրած էին իրենց գործերը (ձեռային աշխատանք, գծագրութիւն, գեղանկար եւ այլն): Նոյն ատեն տեղի ունեցան գեղարուեստական ելոյթներ՝ թատրոն (պր. Վազգէն Մուղալեան), պար (օրդ. Լէա Միլեւսերեան), երգ (տիկ. Նեկտար Փալազեան), ասմունք (տիկ. Զարմինէ Ասմինեան) եւ այլն: Ճոխ յայտագիրով ելոյթ ունեցաւ նաեւ մանկապարտէզը: Ֆապրիանոյի մրցանակակիրները

ստացան իրենց նուէրները:

Այդ առթիւ ցուցադրուեցան նաեւ Rotaract կազմակերպութեան համագործակցութեամբ կայացած «միասնաբար կերտենք խաղաղութիւն» վարժանիստին համար պատրաստուած պատանոներուն ցուցադրութիւնը (առաջնորդութեամբ Սիլվա եւ Ժան-Փօլ Կիրակոսեաններու): Ներկայ էին Լիբանանի Rotary եւ Rotaract կազմակերպութեանց պատասխանատուները՝ տոքթ. Միշէլ Ժազգար, տիկին Սոնա Ժարուտի, տիկին Ղատա Այրուպ եւ պր. Պասսամ Սիպա'ի եւ այլք:



📌 Ընդհանուր զարգացման մրցումի յաղթական խումբը:

👉 «Խօսանակ» ամսաթերթի կազմակերպած ասմունքի եւ գծագրութեան մրցանքի մասնակիցները:

📌 LAU-MUN-ի մասնակից Հայ Աւետարանական Գոլէճի խմբակը:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԸ



2019

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (HU) _____

Դալար Հայտօսթեան (2016)

BBA, Business Administration

Գարէն Քիրենեան (2015)

BBA, Business Administration

Քրիսթին Շահինեան (2014)

BA, Political Science

Մարինէ Շէհիրեան (2014)

BS, Medical Laboratory Sciences

ՊԵՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (AUB) _____

Միրէյ Լեպլեպեան (2010)

MS, Epidemiology

Արման Խտրլարեան (2015), BBA

Dual major in Economics and Finance

Արազ Տէմիրճեան (2014)

BS, Architecture

ՊԵՅՐՈՒԹԻ ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (BAU) _____

Միամմատ էլ Խաթիպ (2015)

BE, Civil Engineering

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (LAU) _____

Յովիկ Արթինեան (2015)

BE, Bioinformatics

Լարա Կիլիմեան (2016)

BS, Economics

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (LIU) _____

Միրէյ Պաղտասարեան (2015)

BBA, Banking and Finance

ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄՆ-ի Արեւմտեան ափի ՀԱԳ-ի _____

Շրջանաւարտից միութեան միջոցով _____

Տիար Վիգէն Գրաճեան (ԱՄՆ)

2500 տոլար

2019-ի իր տարեկան յարկացումը

«ԴՈԿՏ. ԶԱԽԵՆ ՄԱՐԵԼԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԸ»-ԻՆ

Ռաֆֆի Աբոշեան (ԱՄՆ)

200 տոլար

ԴՊՐՈՑԻ 95-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Ճորճ Տապալաղ (ԱՄՆ)

200 տոլար

25 ՄԱՅԻՆ 2019-Ի ԿԼԵՆՏԷՅԼԻ ՎԵՐԱՀԱՒԱՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Պր. Ժիրայր Ֆրունճեան

700 տոլար

Օրդ. Սեդա Պողիկեան

500 տոլար

Տոքթ. Արմէն Կէօնճեան

500 տոլար

Տիկ. Վերոնա Ուրֆալի

500 տոլար

Տոքթ. եւ տիկ. Վիգէն Ահարոնեան

300 տոլար

Տիկ. Մարալ Խաչատուրեան-Զօպանեան

200 տոլար

Պր. Փօլ Իշխանեան

100 տոլար

Պր. Վաչէ Փարթամեան

100 տոլար

Տիկ. Ռիթա Տէմիրճեան

40 տոլար

Պր. Հարմա Մաղաքեան

25 տոլար

Ուղղակի դպրոցին _____

Տէր եւ տիկ. Պերճ եւ Սոնա Գալայճեան (Մոնթրալ)

3000 տոլար

«ԴՈԿՏ. ԶԱԽԵՆ ՄԱՐԵԼԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԸ»-ԻՆ

Տէր եւ տիկ. Մորիս եւ Պերճուհի Կիլեսերեան (ԱՄՆ)

200 տոլար

Տիկ. Սալբի Թոքաթեան (ԱՄՆ)

50 տոլար

«ՍԻՓԱՆ»-ԻՆ՝ ԱՌԻԳՆԱՀԱՏԱՆՔ

Տիկ. Յասմիկ Հալեպլեան (ԱՄՆ)

125,000 Լ.Ն.

Խմբագիր՝ ՏԵՐԵՆ ԴՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱԵՇԼԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ ՊԱՐՏՈՅԵԱՆ
 ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 Էջաղորդ՝ ԱՆԻ ՔԵՏԵՆԵԱՆ-ՊԱՄԵԹ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE

P.O. Box 3672-Beirut

Tel: 01 349 816 Fax: 01 751 469

E-mail: A_E_C@cyberia.net.lb

Website: aecbeirut.edu.lb

Facebook: Armenian Evangelical College